

«Մանկավարժական միտք» ամսագիր, թիվ 1, Երևան, 2014

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ...» ՎԵՊԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՍՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վեպի դասավանդումը գրեթե միշտ առաջացնում է դժվարություններ: Դա ամենից առաջ կապված է պատումի ու ժանրային յուրահատկության, այն է՝ *ժողովրդական վեպի* տեսակի, կերպարային համակարգի, ոճի և, իհարկե, նոր ձևավորվող գրական աշխարհաբարի բարբառախառն շերտերի առկայության հետ: Այդ ամենին գրականագիտությունն անդրադարձել է բազմիցս. գրվել են ծանրակշիռ մենագրություններ, լրջմիտ աշխատություններ: Իսկ ներկա հրապարակման նպատակն է ուշադրություն հրավիրել այդ կոթողային երկի դասավանդման որոշ առանձնահատկությունների վրա:

Խոսելով «Վերք Հայաստանի...» վեպի մասին՝ ամենից առաջ ծագում է խորագրի խորհուրդը. այն իմաստաբանորեն բավականին ծանրաբեռնված է՝ ինչու՞ *վերք*, ինչու՞ *ողբ*:

Նախ՝ *վերքը*. բնավ զանց չառնելով պարսկական լծի տակ հեծող հայոց մի ստվար հատվածի տևական անլուր տառապանքի գիտակցության հեղինակային հասկանալի նկատումները՝ *վերքի* իմաստաբանական հատկանիշները պետք է փնտրել նաև ուրիշ շերտերում՝ տվյալ շրջանում հերոսական ոգու՝ հայոց մեջ դեռևս ընդհանրական չլինելու հանգամանքի, քաղաքական կողմնորոշման հետևանքով ծայր առած հիասթափությունների և, իհարկե, Հայաստանի արևմտյան հատվածի սրտակեղեք ավերումների ու մշուշոտ գալիքի հետ:

Վերքը նաև հեղինակի անձնական ցավի ցուցիչն է: Վերնագիր դուրս բերված այս բառը հեղինակին կապում է իր վեպի, այնտեղ արծարծվող արդիական և իրեն հուզող խնդիրների հետ: Բացի այդ՝ Աբովյանն ընթերցողին թաքնված կերպով հուշում է, որ ներկայացվող տեքստը հոգեբանորեն, հոգեպես խորապես գիտակցված հեղինակային աշխատանքի արգասիք է:

Նշյալ հանգամանքներից առաջինի հայտնաբերումն ու վերհանումը պատկանում է Միք. Նալբանյանին: Հենց այս երևելի մտածողն է, որ «Մեռելահարցուկ» անավարտ վեպի (1859) տողատակի ծանոթագրություններում առաջին անգամ բացահայտել է «Վերքի...» գաղտնիքներից մեկը, այն է՝ Աղասու և նրա ընկերների հերոսական ոգու եզակի, ոչ ընդհանրական լինելը հայոց համար. «Նա (Աբովյանը.- Ալ. Մ.) ցույց է տալիս Աղասու ընկերներով, թե ո՛չ բոլորովին սառել է հայկական արյունը Հայաստանի գա-

վակների երակներում, ցույց է տալիս, թե մի հերոսի հրավեր, ազգի իրավունքների, կրոնի և ազատության անարգվելու վրեժը մի թշնամուց հանելու համար, դեռևս տեղ գտանում է ազգի երիտասարդների սրտի մեջ: Ցույց է տալիս մեզ ազգի ընդհանուրի վիատյալ և հուսահատ դրութենից հառաջացած սառնությունը դեպի Աղասու ընկերքը, նոցա կիսասիրտ կանացի ցավակցությունը այս կտրիճներին, որով հասկացնում է Աբովյանը, թե Աղասու ընկերների հոգին ընդհանրական չէ բոլոր ազգին, թե այս ջերմարյուն տղամարդիկը շրջապատված էին սառնարյուն մարդերից, որոնց աչքում ամենայն բարոյական խնդիր կորուսել էր յուր արժանավորությունը, և որոնց միակ քաջությունը ամփոփվում էր այն բանի մեջ, որ կարող էին լալ, ողբալ և մորմոքվիլ, առանց որոնելու այդ դրութենից դուրս գալու հնարը»¹: Ուրիշ խոսքով՝ թեև հայ ժողովուրդը դուրս էր եկել իր նոր ծաղկումի շրջանը, այնուամենայնիվ առջևում դեռ կային չլուծված բազմաթիվ խնդիրներ, իսկ հերոսները սակավ էին: Ինչպես նկատում ենք, Միք. Նալբանդյանը Աբովյանի ստեղծագործության վերնագիրը բացատրում է՝ ելնելով վեպի «ներսից», այն է՝ կերպարային համակարգից, նրանց միջանձնային հարաբերություններից:

Վեպի խորագրի իմաստաբանական հաջորդ ենթաշերտը կապված է երկրի քաղաքական կողմնորոշման լիովին չարդարացվելու հետ: Այս հարցադրումը, անշուշտ, կարող է առաջացնել ինչ-ինչ տարակույսներ. չէ՞ որ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Հայաստանի արևելյան հատվածը միացվել էր Ռուսաստանին ու փաստորեն փրկվել ֆիզիկական բնաջնջման սարսափից. ասել է թե՛ իրականացել էր հայոց վաղեմի երազանքը: Այսօր էլ շատ սրտառուչ է հնչում հայոց ազատագրության հույսերի՝ դարերի խորքում հյուսված լեգենդը՝ մեջբերված Իսրայել Օրու՝ Պետրոս Մեծին 1701-ին հասցեագրված լատիներեն զեկուցագրից. «Կանխագուշակել են մարգարեները, թե ժամանակներ անց անօրենները չափից ավելի պիտի մոլեգնեն՝ հարկադրելով քրիստոնյաներին ընդունելու իրենց նողկալի կրոնը, և այդ ժամանակ Մոսկովյան օգոստափառ տանից պիտի գա ոմն մեծ իշխան, շատ ավելի քաջարի, քան Ալեքսանդր Մեծը, որն իր ձեռքը պիտի առնի Հայոց թագավորությունը և ազատի քրիստոնյաներին»²:

Այդ հանգամանքը, ինչ խոսք, քաջ գիտակցում էր Աբովյանը, և վեպի հյուսվածքում գերակայող է ռուսասիրության ու Ռուսաստանին երախտագետ լինելու գաղափարը: «Ընչանք մեռնինք ո՛չ, որ մեկ օր էլ էսպես՝ էլով, գյունով, ռուսի ձեռի տակին նստինք, քեֆ անենք», «Տե՛ր աստված, դու մեր Ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ

¹ Նալբանդյան Միք., Երկերի լիակ. ժող. վեց հատորով, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 311-312:

² «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արժագանքները հայ գրականության մեջ» (աշխատասիրությամբ Պ. Հակոբյանի), Երևան, 1978, էջ 3:

ազատի. ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք»³, - անկեղծանուն են քանաքեռցիները: Ազդեցիկ են նաև Երևանի բերդի գրավման հեղինակային հիշատակումները. «Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասունքը էլ չէին թողում, որ մարդու բերան բաց ըլի: Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը, որ քարացել, սառել, երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէ՛ր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար» (287-288):

Այս և համանման ուրիշ հատվածները, հարկավ, հայության պատմական տրամադրությունների ճշմարտացի վերարտադրություններն են: Դա անժխտելի է: Ուշադիր լինելու դեպքում, սակայն, նկատում ենք, որ վեպը գրելով 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից ուղիղ 13 տարի հետո (1841-ի փետրվար-հոկտեմբեր)՝ Աբովյանը վաղուց արդեն նկատել էր կայսրության վարած հայահալած, գաղութատիրական, այլ կերպ՝ սպիտակ ջարդի քաղաքականությունը և խորապես հիասթափված էր «հյուսիսի տիրակալից»: Դա էլ իր հերթին մի նոր *վերք* էր՝ ծայր առած նոր իրադրություններից, կարգերից ու օրենքներից... Արդ, ո՞րն էր ելքը: Նշելի է, որ որքան էլ հիասթափված՝ Աբովյանը չէր կեղծում. վիպական հյուսվածքում շարունակ դրվատանքի խոսք ասելով Ռուսաստանի մասին՝ անաչառորեն արձանագրում էր պատմական փաստը. քրիստոնյա հզոր հարևանը հայ մարդկանց հոգնաբեկ հայացքներում բացում էր հույսի նոր հորիզոններ, փրկում ֆիզիկական ոչնչացման վտանգից: Բայց արդյոք այդքա՞նը՝ բնավ. լայնախոհ մտածողի համար Ռուսաստանը բոլոր դեպքերում մնում է իբրև միջոց, այլ ոչ նպատակ. վերջինս գալիքում էր՝ Հայոց աշխարհի ազատ ու անկախ գոյության հեռանկարում: Ահա այստեղից էլ ծնվում է իմաստալից հորդոր-պատգամը՝ ուղղված հայ սերունդներին.

... Խելքդ ժողովես, լինիս կտրիճ հայ,
Ռուսաց հզոր, քաջ ձեռի տակին
Փոքր դինջանաս ու քո աշխարքին
Մուղայիթ կենաս, արյունդ թափես,
Քո ազգը պահես, քեզ անուն ճարես (261):

Խորագրային *վերքի* իմաստաբանական հաջորդ ենթաշերտը վերաբերում է հեռուներում՝ վաչկատուն ցեղախմբերի ճիրաններում հոշոտվող Արևմտյան Հայաստանի տազնապահարույց խնդրին՝ թե՛ Աբովյանի և թե՛ մեր օրերի հայության բաց, մխացող վերքին: Գրողն սպասում էր այն երանավետ օրվան, որ «բոլոր Հայաստան տիրեսցե

³ **Աբովյան Խ.**, Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 84 (Այս հրատարակությունից մեջբերվող հատվածների էջերն այսուհետև կնշվեն համապատասխան տեղում՝ փակագծի մեջ):

Ռուսիայ»⁴: Եվ այս բաղձանքն առկա է նաև «Վերք Հայաստանի...» վեպի էջերում. Աղասին երազում է մի օր վերաշինված տեսնել ավերված «Հայոց Տունը»: «Մնանք էս սուրբ հողումը, մեր սուրբ թագավորաց գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը ազատենք գողի, ավազակի ոտքից» (266),- ասում է նա:

Ինչպես տեսնում ենք, *վերքը* ստանում է քաղաքական ծանրաբեռնվածություն. այն դառնում է Արևմտյան Հայաստանի չլուծված, Արևելյան Հայաստանի հայության ֆիզիկապես չբնաջնջվելու մասամբ լուծված հարցի և այլ խնդիրների առկայության ցուցիչը:

Վեպի խորագրի զույգ փոփոխակներից երկրորդի՝ *ողբի* առկայությունն արդեն պետք է որոնել մի դեպքում գրական ավանդույթի (Մովսես Խորենացու, Դավթակ Քերթողի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և այլոց ողբերը), մյուս դեպքում՝ անհատական պլանում. դա գլխավոր հերոսի՝ Հայաստանի արժանավոր գավակի՝ Հեղինակի անկեղծ ողբն է՝ բխած հայրենի եզերքի անցյալի ու ներկայի տառապանքների սրտմաշուկ զգացողություններից և գալիքի անորոշ տագնապներից:

Ողբը ենթադրում է, որ վեպում արժարժվող խնդիրները չեն կրում լոկ մասնավոր, սուբյեկտիվ, նեղ անձնական բնույթ. դրանք բարձրացվում են վերազգային մակարդակի, կարևորվում է ընդհանուրը: Այս առումով Նարեկացի-Աբովյան մտածողությունը դառնում է տեսանելի, և նկատվում է որոշակի տարբերություն: Ինչպես Նարեկացին է իր Ես-ի միջոցով արտահայտում համայն մարդկության խնդիրները, այնպես էլ Աբովյանը: Բայց մի տարբերությամբ: Եթե Ես-ը Նարեկացու համար մեկնակետ է՝ *ընդհանուրը* ներառելու համար, ապա Աբովյանի համար՝ մասնավորը՝ ազգայինը:

«Վերք Հայաստանի...» վեպի դասավանդման տեսակետից հաջորդ կարևոր խնդիրը վերաբերում է երկի կառուցվածքին: Հետազոտողների մեծ մասը, չգիտես ինչու, հիմնականում մատնանշում է միայն «Հառաջաբանը», երեք գլուխները և «Զանգի» հավելվածը՝ զարմանալի անփութությամբ անտեսելով հեղինակի ձեռքով զետեղված *Ընծայականը*, որը տվյալ պարագայում էական է գրքի ստեղծագործական պատմության ու հեղինակային նպատակադրման էությունը հասկանալու համար: Եվ սա այն դեպքում, երբ վաղուց՝ 1981-ից, ընթերցողի սեղանին է երջանկահիշատակ աբովյանագետ Պիոն Հակոբյանի կողմից հրատարակված ամբողջական «Վերք Հայաստանի...»-ն:

Աբովյանն իր վեպը ձոնել է Հայկական մարզի վերջին կառավարիչ, գնդապետ Գևորգ Ստեփանի Սմբատյանին (մոտ՝ 1800-1846), որը եղել է նրա մանկության ու պատանեկության տարիների բարեկամներից մեկը: Ուշագրավ է, որ վեպը գրելու ընթացքում նա արդեն կառավարիչ չէր և ցարական իշխանությունների կողմից քիչ հետո

⁴ Տես **Աբովյան Խ.**, Երկերի լիակ. ժող. ութ հատորով, հ. VI, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, էջ 26:

պիտի ամբաստանվեր պաշտոնեական չարաչափումների համար⁵: Ի դեպ, հիշյալ գնդապետն առաջինն է ծանոթացել «Վերք Հայաստանի...» վեպի սկզբնական էջերին, նա է, որ, նոր գրականության մայրուղին բացելու ընթացքում դեռ կասկածներ ունեցող Աբովյանին սեղմելով կրծքին, քաջալերել է ու ջերմորեն բացականչել. «Մեր հայ Լոմոնոսովը ծնվել է...» (317): Արդյունքում՝ վեպը գրվել է կարճ ժամանակամիջոցում և մի շնչով:

«Վերք Հայաստանի...» վեպի դասավանդման ընթացքում սովորաբար անտեսվող հաջորդ խնդիրը վերաբերում է «Հառաջաբան»-ում առաջադրված հարցերից մեկին. հաջողությամբ և անաչառորեն մատնանշելով հեղինակի՝ հայ նոր գրականության սկզբնավորմանն ու զարգացմանն ուղղված նպատակադրումները՝ գրականության լեզվի, բովանդակության և հերոսի ընտրության առիթով, երբեմն ստվերում է մնում մի ուշարժան հարցադրում՝ *գրողի ստեղծագործական անկեղծությունը*: Ըստ Աբովյանի՝ գրողը պետք է լինի անաչառ, պետք է վեր կանգնի նեղ, անձնական շահախնդրություններից, գերադասի ճշմարտությունը. չէ՞ որ ճշմարիտ արվեստի գերակայող ուժը բոլոր ժամանակներում եղել ու մնում է կենսական տարերքի անկեղծ պատկերումը: Եվ ահա, ինչպես իրավացիորեն նկատել է ակադ. Յր. Թամրազյանը, «պատմական ճշմարտությունը և գրական խիղճը նրան (Աբովյանին. - Ալ. Մ.) տանում են բուն մարդկանց աշխարհը, հայոց հասարակ տարերքը: ...Աբովյանը գերադասում է ճշմարտությունը՝ ընթերցողին տանելով ժողովրդի մարդու՝ աղքատ ու մեռած Աղասու մոտ»⁶: «Մեկ բարիկենդանի,- գրում է վիպասանը,- աշակերտներս որ բաց թողի, սկսեցի, ինչ որ երեխությունիցս լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ: Վերջը իմ ջիվան **Աղասին** միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ հայ տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին, ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնան: Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ-սալամաթ, փառք աստծո, Աղասին՝ աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին դուրբան: Ասեցի՝ կեղծավորություն չանեն, նրան ընտրեցի» (46):

Անկեղծությունը, Աբովյանի խոսքով՝ կեղծավորություն չանելը նրանից պահանջել է խիզախություն. գրականության մեջ նոր շրջանում նա առաջին անգամ պետք է ստեղծեր Հայաստանի գեղարվեստական կերպարն ու զրույց բացեր այդ կերպարի շուրջ, պետք է հրաժարվեր կլասիցիզմի տիրապետող ավանդներից և դուրս թողնելով զանազան վիպերգերի ու հեռավոր անցյալի հերոսներին, թագավորներին ու իշխանավորներին՝ վեպի կենտրոնական հերոս դարձներ սովորական գեղջուկին: Ստեղծագործական հենց այդ անկեղծությունն էր, որ նրան մղեց հայտնաբերելու հայ հայրե-

⁵ Գևորգ Սմբատյանին շուրջ 5 երկար տարիներ հետո միայն հաջողվեց վերականգնել իր բարի անունը. ռազմական դատարանը նրան արդարացրեց 1845-ի հոկտեմբերին կայացրած որոշմամբ:

⁶ **Թամրազյան Յր. Ս.**, Երկեր, հ. Ա, Երևան, «Նաիրի» հրատ., 2006, էջ 768-769:

նիքի պահպանության ճշմարիտ մայրուղին՝ սրբազան սեր ու անձնագոհությունն Հայաստանի նկատմամբ.

Շունչդ տունը, հոգիդ, բայց քո Հայրենիք
Մի՛ տար թշնամյաց...

Վերը ասվածից կարող ենք եզրակացնել, որ Խաչատուր Աբովյանը, ներկայացնելով իր հերոսի ընտրության «պատմությունը», ցույց է տալիս, որ իր հետագա պատումը լինելու է ոչ թե սպեկուլյատիվ, մտացածին, այլ հիմնվելու է իրական, հոգեբանական փաստերի վրա: Այլ խոսքով՝ գրողը մեծանուն մոտեցմամբ հարացուցային փոփոխություն է մտցնում հայ գրականության մեջ կերպարների, վեպի կերտման առումով. հրաժարվում է գրական նախորդող տեքստերում առկա «դատարկ», չվերապրված կերպարներից, իրադարձություններից՝ փոխարենն առաջարկելով հոգեպես վերապրած գրական աշխարհի մոդելը:

Макарян Альберт

Некоторые проблемы преподавания романа «Раны Армении»

Аннотация

Статья посвящена некоторым проблемам преподавания романа Хачатур Абовяна «Раны Армении». Особенно подчеркивается важность изучения композиции и поэтики романа, а также проблем, выдвинутых в «Предисловии». Выполняя роль программы-манифеста, эти проблемы явились фактически решающими для последующего развития новой армянской литературы. Речь идет о проблемах языка новой литературы, ее содержания, выбора героя и, что немаловажно, о проблеме искренности и честности писателя.

Albert Makaryan

“Some Problems of Teaching the Novel “Wounds of Armenia”

Summary

The article is dedicated to some problems of teaching the novel by Khachatur Abovyan “Wounds of Armenia”. It especially underlines the issues of structure and poetry of the novel and the importance of teaching the main problems that are put forward in the “Introduction” of the novel. These problems play the role of a kind of manifest-program which was in fact decisive for the future development of the new Armenian literature. Those issues are the language of the new literature, the content, the choice of the literary hero which is not less important than the frankness and honesty of the author.

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբովյան Խ.**, Երկերի լիակ. ժող. ութ հատորով, հ. VI, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955:
2. **Աբովյան Խ.**, Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի, Երևան, ԵՊՀ հրատ., 1981:

3. «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» (աշխ.՝ Պ. Հակոբյանի), Երևան, 1978:
4. **Թամրազյան Հր. Ս.**, Երկեր, հ. Ա, Երևան, «Նաիրի» հրատ., 2006:
5. **Նալբանդյան Միք.**, Երկերի լիակ. ժող. վեց հատորով, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, հ. 4, 1983: